ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Հրաչուհի Սարգսյան, Իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության բաժնի գլխավոր իրավաբան

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Պրահա, Չեխիայի Հանրապետություն, 2024թ. նոյեմբերի 26-ից 29-ը

3. Հրավիրող կողմը.

Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հայ-չեխական տնտեսական համագործակցության միջկառավարական համատեղ հանձնաժողովի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության և Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա Հայաստանին տրամադրվող տեխնիկական աջացություն շրջանակներում կազմակերպված ուսուցողական այցի շրջանակներում ձեռք բերված փորձն ու գիտելիքները կարող են նպաստել անմիջական պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացմանը նախարարության գործունեության իրավական ապահովման, այդ թվում նաև՝ հանրկային քաղաքականության, հանրային ֆինանսների կառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի մշակման և ՀՀ ֆինանսների նախարարության քննարկմանը ներկայացված նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացություններ տրամադրման շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս քննարկվում է պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում քաղաքականության մշակման գործառույթը ՀՀ ֆինանսների նախարարությանը վերապահելու հարցը, որի շրջանակներում իրավաբանական վարչությունն ակտիվորեն ներգրավված է լինելու անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովման գործընթացում:

5. Քննարկված թեմաները

1. Պետական բյուջե և գանձապետարան - Գանձապետական համակարգի միջոցով բյուջեի կատարում, Գանձապետական միասնական հաշիվ և դրա առանձնահատկությունները,

2. Պետություն-մասնավոր գործընկերության կարգավորման իրավական շրջանակը, ներառյալ՝ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակմանը և իրականացմանն առնչվող կանոնները և ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը, կիրառելի չափանիշները, մասնավոր գործընկերոջ

ընտրության ընթացակարգը և ոլորտին առնչվող այլ հարցեր (օրենսդրություն և մոնիտորինգ),

3. Պարտքի կառավարում - Պետական պարտքի ռիսկի կառավարում, պարտքի կառավարման մեջ ածանցյալ գործիքների օգտագործում, ներդրողների հետ աշխատանք և ներդրողների բազայի դիվերսիֆիկացում,

4. Պետական պարտատոմսերի մանրածախ վաճառք,

5. Չեխիայի փորձը տրանսպորտի ոլորտում՝ ՊՄԳ նախագծերի իրականացման ոլորտում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ճանաչողական այցը տեղի է ունեցել Չեխիայի Հանրապետության ֆինանսների նախարարությունում:

Այցի ընթացքում քննարկվող հարցերը առնչվում էին ՊՄԳ ծրագրերին, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերից բխող հարկաբյուջետային ռիսկերին, պետություն-մասնավոր գործընկերության կարգավորման իրավական դաշտին ընթացակարգերին: Ներկայացվել են կառավարման ինստիտուցիոնալ շրջանակները, կիրառելի չափանիշները:

Ներկայացվել է Չեխիայի Հանրապետության գանձապետական համակարգի միջոցով բյուջեի կատարման սխեման, գանձապետական միասնական հաշիվը և դրա առանձնահատկությունները:

Հանդիպման ընթացքում քննարկվել է պետական պարտքի կառուցվածքը, պարտքի ռիսկի կառավարումը, ածանցյալ գործիքների կիրառումը, ներդրողների դիվերսիֆիկացումը, պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի ընթացակարգերը, տեսակները:

Ներկայացվել է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում, տրանսպորտի ոլորտում Չեխիայի փորձը, մասնավոր գործընկեր ընտրելու ընթացակարգերը (մոնիտորինգը) և ոլորտին առնչվող օրենսդրությունը:

Բոլոր թեմաները ներկայացվել են շնորհանդեսների միջոցով: Թեմաների ներկայացման ընթացքում մասնակիցների կողմից տրվել են հարցեր և տեղի են ունեցել արդյունավետ քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որոշման ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ուսուցողական այցի մասնակցության արդյունքում ձեռք բերված փորձն ու գիտելիքները հիմք կհանդիսանան պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում քաղաքականության և ռազմավարության մշակման աշխատանքներին ակտիվ ներգրավմանն ու այդ ոլորտի պահանջների առավել արդյունավետ կիրառմանը, թույլ

կտան լավագույնս վերլուծել և գնահատել պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում ազգային օրենսդրության համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին, ներկայացնել առաջարկություններ պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում օրենսդրության բարեփոխման վերաբերյալ:

Բացի այդ, ուսուցողական այցի շրջանակներում ընդգրկված թեմաների ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտել արդյունավետ իրավական նախագծման մոտեցումները՝ հիմնվելով զեկուցողների և գործընկերների կողմից կիսված փորձառությունների վրա, վերլուծել և գնահատել պետական ֆինանսների կառավարման ազգային օրենսդրությունը՝ համեմատելով միջազգային փորձի հետ, մշակել և ձևակերպել առաջարկություններ պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում օրենսդրության բարեփոխման վերաբերյալ, առաջարկել ռացիոնալ մեթոդներ իրավական խնդիրների լուծման համար, շահագրգիռ կողմերին ներկայացնել պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում օրենսդրության առաջարկվող փոփոխությունները և պաշտպանել այդ առաջարկները շահագրգիռ կողմերի հետ քննարկումների և խորհրդակցությունների ընթացքում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

04.12.2024 թ